



## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Յունիս 2015 - Յուլիս 2017

ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
Ներկայացուած՝  
ՀՕՄ-ի 93-րդ եւ Գանատայի Շրջանի 23-րդ Պատգամաւորական Ժողովին  
30 Յունիս, 1-2 Յուլիս 2017  
ՄՈՆԹՐԷԱԼ

# ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

## Երկամեայ Տեղեկագիր

### 2015- 2017

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան 2015-2017 տարեշրջանի առաջին ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Յունիս, 2015-ին, շրջանիս 22-րդ Պատգամաւորական ժողովի աւարտին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան շրջանաւարտ եւ նորընտիր կազմերուն եւ 22-րդ Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետներ՝ ընկհ. Աննա Պուլկարեանի եւ Զեփիւռ Տորնայի, ատենադպիրներ՝ ընկհ. Անի Պապիկեանի եւ Մարալ Յովհանէսեանի:

Ժողովը միաձայնութեամբ կատարեց վարչական պաշտօններու բաժանումը հետեւեալ ձեւով:

Ատենապետ	Ընկհ. Արմինէ Կարապետեան	Մոնթրէալ
Փոխ-ատենապետ/ գանձապահ	Ընկհ. Վարդուկ Պէգճեան	Մոնթրէալ
Քարտուղար եւ ատենադպիր	Ընկհ. Անի Թաշճեան	Մոնթրէալ
Հաշուապահ	Ընկհ. Անի Գրալեան	Մոնթրէալ
Խորհրդական	Ընկհ. Սիլվա Գարբուզեան	Մոնթրէալ
Խորհրդական	Ընկհ. Սիլվա Պետիրեան	Թորոնթօ
Խորհրդական	Ընկհ. Նաթալի Մանուկեան	Համիլթըն

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային 22-րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած փոխ անդամներ.-

Քէպէզ	
Ա.- Փոխ անդամ	Ընկհ. Անի Պապիկեան
Բ.- Փոխ անդամ	Ընկհ. Մարալ Յովսէփեան

Օնթարիօ	
Ա.- Փոխ անդամ	Ընկհ. Սիլվի Օհանեան
Բ.- Փոխ անդամ	Ընկհ. Գեղուհի Պասթաճեան

## **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ**

### **Ժողովներ - Շրջանային Վարչություն**

28 Յունիս, 2015 - 29 Յունիս, 2017 Շրջանային վարչությունս գումարեց 14 լիազումար ժողովներ, ինչպես նաև շաբաթական դրութեամբ աշխատանքային նիստեր գրասենեակէն ներս, որոնց յաճախակիօրէն համակարգչային կամ հեռաձայնային հաղորդակցութեամբ միացան Օնթարիոյի շրջանի վարչական ընկերուհիները:

Վարչությունս լիազումար ժողովներու ընթացքին բժախնդրութեամբ քննեց օրակարգերու իրաքանչիւր հարց եւ կայացուց որոշումներ ծրագիրներու կիրարկման համար: Օրակարգերը ընդգրկեցին ՀՕՄ-ի 22-րդ Պատգամաւորական ժողովէն բխած բանաձեւերու իրագործում, Շրջանային վարչութեան տարեկան մնայուն ծրագիրներ, յատկապէս՝ Յեղասպանութեան 100-ամեակի Հայ Դատի համագանատական մայր յանձնախումբի գործունէութիւն, Հայաստանագնացութիւն, տուրքէ գերծ տպագիր ստացագրի դրութիւն, տպագիր վճարագրի իրագործում, առցանց նուիրատութեան գործընթաց, կեանքի ապահովագրութեան գումարներու եւ կտակներու որոնման աշխատանք, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ծրագիրներ, յատկապէս՝ ՀՕՄ-ի Հիմնադրամ դրամահաւաք, Արցախի օժանդակութիւն, Ստեփանակերտի նորակառոյց «Սօւէ» մանկապարտէզի դրամահաւաք եւ ժողովիս ուշադրութեան յանձնուած այլ հարցեր:

Շրջանային վարչութեանս գործունէութեան բարոյական եւ նիւթական բաժնի բոլոր մանրամասնութիւններու գրաւոր պատճէնները կը մնան վարչութեանս արխիւներուն մէջ:

Վարչութեանս երդուեալ հաշուապահն է Պրն. Մուրատ Արմուտլուն, իրաւաբանն է Պրն. Արմենակ Գազանճեան:

Հաշուապահութեան աշխատանքները կը կատարուին Quick Books Pro ծրագրով:

### **Ներկայացուցչական դրութիւն**

Մասնաճիւղերուն հետ մնայուն կապ պահելու, աշխատանքները հետապնդելու, ուղղութիւն տալու եւ խորհրդակցելու միտումով՝ վարչությունս հետեւեալ ներկայացուցիչները նշանակեց մասնաճիւղերուն մօտ:

Ընկհ. Նաթալի Մանուկեան	Համիլթըն «Արեւ» Սէնթ Գաթրինգ «Արագ» Գէմպրիճ «Մեդրի»
Ընկհ. Սիլվա Պետիրեան	Թորոնթօ «Ռուբինա» Միսիսոկա «Առագաստ»
Ընկհ. Սիլվա Գարբուզեան	Օթթաուա «Սեւան» Ուինձըր «Ռուբինա»
Ընկհ. Անի Գրայեան	Լաւալ «Շուշի»
Ընկհ. Արմինէ Կարապետեան	Վանգուվըր «Արագ»
Ընկհ. Վարդուկ Պէզճեան	Մոնթրէալ «Սօւէ»

## Մասնաճիւղերու այցելութիւններ

Այս տարեշրջանի ընթացքին Շրջանային վարչութիւնը մասնաճիւղերու այցելութիւնները կատարեց հետեւեալ ժամանակացոյցով:

Ուրբաթ, 6 Նոյեմբեր 2015	Թորոնթօ «Ռուբինա» վարչական հանդիպում
Շաբաթ, 7 Նոյեմբեր 2015	Միսիսսոկա «Առագաստ» անդամական հանդիպում Սէնթ-Գաթրինգ «Արագ» անդամական հանդիպում Համիլթըն «Արեւ» անդամական հանդիպում
Կիրակի, 8 Նոյեմբեր 2015	Ուինծըր «Ռուբինա» անդամական հանդիպում
Շաբաթ, 27 Փետրուար 2016	Լաւալ «Շուշի» վարչական հանդիպում
Կիրակի, 28 Փետրուար 2016	Մոնթրէալ «Սօսէ» վարչական հանդիպում
Կիրակի, 3 Ապրիլ 2016	Օթթաուա «Մէւան» անդամական հանդիպում
Ուրբաթ, 31 Մարտ 2017	Վանգուվըր «Արագ» վարչական հանդիպում
Շաբաթ, 1 Ապրիլ 2017	Վանգուվըր «Արագ» անդամական հանդիպում

Այս այցելութիւնները գրեթէ միշտ եղան լրիւ կազմով, ի բացառեալ Վանգուվըրի «Արագ» մասնաճիւղին: Սոյն մասնաճիւղին այցելեց ընկի. Արմինէ Կարապետեան: Այս շրջանին, Գեմպրիճի «Մեդրի» մասնաճիւղի ձեռնարկներու ժամանակացոյցի խաչաձեւումի պատճառով, յարմար չեղաւ այցելել:

Այցելութիւններու ընթացքին արձարծուեցան իւրաքանչիւր շրջանի մտահոգութիւններն ու դժուարութիւնները, անդամական վիճակը, ՀՕՄ-ի քարոզչական աշխատանքի կարեւորութիւնը, վարչութիւններու նիւթական պարտաւորութիւնները, մասնաճիւղերու մօտ վարչական անդամ գտնելու դժուարութիւնը եւ երիտասարդ ուժերու ներդրումը: Ներկայացուեցան նաեւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի եւ Կեդրոնական վարչութեան ծրագիրները:

## Յարաբերական

Վարչութիւնս ներկայ գտնուեցաւ մասնաճիւղերու անդամական ժողովներուն, ձեռնարկներուն, տարեկան տօնավաճառի բացման հանդիսութեանց, ամէնօրեայ ու միօրեայ վարժարաններու հանդէսներուն եւ հիմնադրութեան տօնակատարութեանց:

1 Մայիս 2016-ի, Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերու ՀՕՄ-ի Օրուայ միացեալ ձեռնարկը առաջին անգամ ըլլալով հովանաւորեց Շրջանային վարչութիւնը: Այս պատեհ առիթով, վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեան power point օգտագործելով, ներկայացուց ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչ. կատարած յատկացումները անցնող 25 տարիներու ընթացքին:

14 Մայիս 2016-ին, վարչութիւնս լիակազմ ներկայ գտնուեցաւ Սէնթ Գաթրինգի «Արագ» մասնաճիւղի 100-ամեակի տօնակատարութեան:

12 Մարտ 2017-ին, Համիլթոն «Արեւ» մասնաձիւղի ՀՕՄ-ի Օրուայ պատգամը փոխանցեց ընկի. Նաթալի Մանուկեան:

7 Մայիս 2017-ին, Մոնթրէալի «Սօւէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաձիւղերու ՀՕՄ-ի Օրուայ միացեալ ձեռնարկին, Շրջանային վարչութեան ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեան power point օգտագործելով, ներկայացուց ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչ. գործունէութիւնը եւ կատարած յատկացումները անցնող երկու տարիներու ընթացքին:

14 Մայիս 2017-ին, Գէմպրիձ «Մէդրի» մասնաձիւղի ՀՕՄ-ի Օրուայ ձեռնարկին ընկի. Նաթալի Մանուկեան power point օգտագործելով, ներկայացուց ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչ. կատարած յատկացումները անցնող 25 տարիներու ընթացքին:

## **Միացեալ ժողովներ**

Վարչութեանս հրաւերով, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ անդամական միացեալ ժողովներ, մասնակցութեամբ Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօւէ» մասնաձիւղերուն:

- Երեքշաբթի, 3 Նոյեմբեր 2015: Ժողովին ներկայ գտնուեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եւ Գանատայի շրջանի ներկայացուցիչ ընկի. Վարսենիկ Սարգիսեան:
- Երեքշաբթի, 1 Նոյեմբեր 2016: Ժողովին հիւրաբար ներկայ գտնուեցաւ Կեդրոնական վարչութեան Սուրիոյ շրջանի ներկայացուցիչ ընկի. Աննա Տէր Յակոբեան, որ մանրամասն զեկուցեց Սուրիահայերու ներկայ իրավիճակի մասին Սուրիոյ տարածքին:

Ժողովներու ընթացքին ներկայացուեցան Շրջ. վարչութեան տարեկան ծրագիրները, նիւթական յատկացումները, նոր հաստատուած հիմնադրամները եւ Կեդրոնական վարչութեան ծրագիրները:

## **Միջ-վարչական ժողով**

Միջ-վարչական ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 15 Հոկտեմբեր 2016-ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնէն ներս: Շրջանային վարչութեան լրիւ կազմի կողքին, ներկայ էին նաեւ 9 մասնաձիւղերու վարչական ընկերուհիներ՝ թիւով 37:

Վարչութիւնս power point օգտագործելով, ներկայացուց իր միամտայ գործունէութիւնը եւ Գանատայի Շրջ. վարչութեան կատարած նիւթական յատկացումները անցնող 25 տարիներու ընթացքին: Ժողովի դաստիարակչական բաժինը ընդգրկեց կամաւոր աշխատանքի եւ ղեկավարութեան նիւթերու շուրջ աշխատանիստ: Մոյն ժողովը արժանացաւ ներկայ ընկերուհիներու բարձր գնահատանքին:

## **ՀՕՄ-ի Ննջեցեալներու Հոգեհանգիստ**

Վարչութեանս խնդրանքով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդի կոչը ուղղուեցաւ Գանատայի Կիլիկիոյ Թեմի Առաքելական բոլոր եկեղեցիներուն, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ՀՕՄ-ի շարքերէն առ յաւետ բաժնուած ընկերուիիներու ու բարերարներու յիշատակին, Կիրակի 28 Փետրուար 2016-ին եւ Կիրակի, 26 Փետրուար 2017-ին: Իսկ, Օթթաուայի, Համիլթընի եւ Միսիսսոկայի մասնաճիւղերը հոգեհանգստեան պաշտօնները կատարեցին տեղւոյն Էջմիածնական Թեմի եկեղեցիներէն ներս:

## **Սուրիահայ երեխաներու կադանդէք**

Շրջանիս 22-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 2 բանաձեւին համաձայն՝ շարունակել Սուրիահայութեան օժանդակութիւնը ըստ 21-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւ թիւ 12-ին, յաջորդ երկու տարիներուն համար, մասնաճիւղերը իրաքանչիւր անդամի համար, վարչութեանս պիտի փոխանցեն US\$7 որպէս կադանդէք սուրիահայ մանուկներուն: Այսպէս, երկու տարուայ համար Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք US\$16,800:

Սոյն օժանդակութիւնը յատկացուեցաւ Հալէպի Ազգային միացեալ վարժարանի մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտութեան, Ս.Օ. Խաչի աշխատանոցէն ներս ձմեռնային զգեստներ պատրաստելով՝ 1050 աշակերտներու:

## **ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 25-ամեակ**

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 25-ամեակը նշուեցաւ հանդիսաւոր կերպով, Ուրբաթ, 26 Յունիս, 2015-ին, Le Crystal շքեղ սրահէն ներս: Ճաշկերոյթ-հանդիսութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի եւ նախագահութիւնը՝ Գանատայի Շրջանի անդրանիկ ատենապետ ընկի. Վանուի Իսաջանեանի: Հանդիսութիւնը կը վայելէր նաեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Պրն. Արմէն Եգանեանի եւ Տիկ. Մարիա Եգանեանի ներկայութիւնը, ինչպէս նաեւ Մոնթրէալի քաղաքապետարանի ներկայացուցիչ ընկի. Մարի Տերոսի, որ փոխանցեց շնորհաւորական յուշատախտակ մը՝ Մոնթրէալի քաղաքապետ Պրն. Տէնի Քոտերի ստորագրութեամբ:

Այս առթիւ, նշանակուեցաւ յանձնախումբ մը բաղկացած Շրջանային վարչութեան նախկին ընկերուիիներէ: Վարչութիւնս մեծապէս կը գնահատէ ընկերուիիներուն կատարած բժախնդիր կազմակերպական աշխատանքը՝ սրահի ընտրութեան, յարդարման եւ գեղարուեստական որակաւոր յայտագրին:

## Հայաստանագնացություն

Հիմնուելով Շրջանիս 21-րդ Պատգամաւորական ժողովէն բխած՝ քարոզչական ծիրէն ներս, բանաձեւ թիւ 7-ի տրամադրութեան, վարչութիւնս շարունակեց նախապէս ձեռնարկուած շրջապտոյտ դէպի Հայաստանի կազմակերպական աշխատանքները: Շրջապտոյտը տեղի ունեցաւ 22 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբեր 2015: Պտոյտին մասնակցեցան Մոնթրէալէն, Լաւալէն, Թորոնթոյէն եւ Գէմպրիճէն 50 ազգայիններ: Ըստ պատրաստուած ծրագրին, խումբը այցելեց Հայաստանի եւ Արցախի տեսարժան վայրեր, Ախուրեանի Մօր ու Մանկան ծննդատունը (ուր սրտաբուխ նուիրատուութիւններէ գոյացաւ US\$3,500), Գանատայի շրջանի հովանաւորած Արցախի Մեծ Թաղեր «Սօւէ» մանկապարտէզը (ուր տեղի ունեցաւ 15-ամեակի հանդէս՝ յատկապէս մեր շրջանի ընկերուհիներուն համար): Արցախի մէջ, խումբը հանդիպեցաւ ԼՂՀ փոխ-վարչապետ Պրն. Արթիւր Աղաբէկեանի հետ: Այս առիթով, Պրն. Աղաբէկեան բարձր գնահատեց ՀՕՄ-ի համագործակցութիւնը ԼՂՀ կառավարութեան հետ, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի բազմաթիւ ծրագիրները Արցախէն ներս եւ անդամներու արդիւնաւոր գործունէութիւնը ի նպաստ մեր ժողովուրդի բարօրութեան: Տեղւոյն հեռատեսիլի կայանը, յատուկ հարցազրոյց մը ունեցաւ ընկերուհիներ Արմինէ Կարապետեանի եւ Անի Օհանեանի հետ՝ ներկայացնելու ՀՕՄ-ի Գանատայի շրջանի կատարած ներդրումը ի նպաստ Արցախի եւ Հայրենիքի ծրագիրներուն:

Շրջապտոյտի ժամանակամիջոցը կը զուգադիպէր նաեւ ՀՕՄ-ի Համահայկական 71-րդ Պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ: Հետեւաբար, պատգամաւոր ընկերուհիներու կողքին, ընկերուհիներէն ոմանք մասնակցեցան որպէս ազատ ունկընդիր ժողովին: Խումբը մասնակցեցաւ նաեւ Հայաստանի Շրջանային վարչութեան կազմակերպած ճաշկերոյթին:

Շրջապտոյտին մասնակցողները բարձր գնահատեցին ծրագրուած բոլոր պտոյտներու կազմակերպութիւնը եւ դասաւորումը, ինչպէս նաեւ պանդոկներու ընտրութիւնը: Երկու շաբթուայ ընթացքին, 50 հոգինոց խումբը ունեցած է մտերմիկ մթնոլորտ եւ սերտ բարեկամական յարաբերութիւն, Հայրենիքի հարազատ ու տաքուկ հովանիին ներքեւ:

Շրջապտոյտի աշխատանքներու կազմակերպութեան ու համադրման համար, վարչութիւնս նշանակեց ընկերուհիներ Աննա Պուլկարեան եւ Յասմիկ Բաբխեան, որոնց գործնական ու անխոնջ ջանքերուն շնորհիւ շրջապտոյտը յաջողութեամբ պսակուեցաւ:

Այս շրջանին եւս, վարչութիւնս կը կազմակերպէ Հայաստան - Արցախ շրջապտոյտ, որ տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 3-15, 2017-ին: Մասնակցողները առիթը պիտի ունենան նաեւ ներկայ գտնուելու Ստեփանակերտի նորակառոյց «Սօւէ» մանկապարտէզի պաշտօնական բացման հանդիսութեան: Ցարդ, արձանագրուած են 40 անհատներ Մոնթրէալէն, Լաւալէն, Թորոնթոյէն եւ Վանգուվըրէն:

Շրջապտոյտի աշխատանքներու կազմակերպութիւնը եւ համադրումը ստանձնեց վարչութեանս ատենապետ ընկհ. Արմինէ Կարապետեան:

## **Կտակներու Յանձնախումբ**

Հիմնուելով ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 22-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 3 բանաձեւին, վարչութիւնս յանձնախումբ մը նշանակեց որոնելու անհատներ, որոնք իրենց կեանքի ապահովագրութեան գումարը յօժարին նուիրել ՀՕՄ-ին:

Ծրագիրը ծանօթացնելու միտումով, յանձնախումբը որոշեց կազմակերպել Քէպէզի եւ Օնթարիոյի մէջ հանրային հաւաքներ՝ ներկայացնելու ՀՕՄ-ի գործունէութիւնը, նիւթական միջոցներ ապահովելու կարելորութիւնը եւ կեանքի ապահովագրութեան գումարը նուիրելու պայմանները: Ծրագիրը չիրականացաւ, ձեռնարկներու բազմազբաղ ժամանակացոյցին պատճառով: Յանձնախումբը պիտի շարունակէ իրեն վստահուած պարտականութիւնը:

## **Առ Ցանց Նուիրատուութիւն**

Հիմնուելով ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 22-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 1 թելադրանքին, վարչութիւնս ուսումնասիրութիւններ կատարեց համակարգչային նոր ծրագիր մը որդեգրելու, համադրելու համար նուիրատուներու ցանկը եւ անոնց առ ցանց ուղարկելու տուրքէ զերծ ստացագիր: Ցարդ, կարելի եղաւ իրականացնել տպագիր տուրքէ զերծ ստացագրի եւ վճարագրի գործընթացներու իրագործումը: Իսկ, առ ցանց նուիրատուութեան աշխատանքը ընթացքի մէջ է:

Վարչութիւնս մեծապէս կը գնահատէ հաշուապահ ընկի. Անի Գրալեանի կատարած բժախնդիր ու աշալուրջ աշխատանքը, ի շահ ծրագրի իրականացման:

## **ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ**

### **Քարտուղարական**

#### **1. Առաքուած գրութիւններ**

- Շրջաբերականներ.-
- 2015-2017 տարեշրջանի ընթացքին, մեր մասնաճիւղերուն առաքուեցան 42 շրջաբերականներ, 22-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւերը իրագործելու, անմիջական ծրագիրներ յայտարարելու եւ տեղեկութիւններ փոխանցելու համար:

- Նամակներ եւ բացիկներ.-

Վարչութիւնս իր երկամեայ գործունէութեան ընթացքին առաքած է զանազան նիւթեր արծարծող 1075 նամակներ, որոնք կարելի է խմբել հետեւեալ բաժանումներով:

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւն, շրջաններ եւ մասնաճիւղեր

Ն. Ն. Դեսպանատուն եւ Սփիւռքի նախարարութիւն

Գանատայի Ազգային Առաջնորդարան

Պատկան մարմիններ եւ քոյր միութիւններ

Ազգային հաստատութիւններ



Ազգայիններ եւ անհատներ  
Որբերու եւ Ուսման ծրագրի խնամակալներ  
Օրացոյց-գրքոյկի ծանուցողներ  
Սրտէ Սիրտ խմբակցութեան անդամներ  
Օտար կազմակերպութիւններ եւ հաստատութիւններ  
Այլ միութիւններ

Վարչութիւնս 103 բացիկներ ուղարկեց զանազան առիթներով ընկերուհիներու, բարերարներու, ուղեկից կազմակերպութիւններու եւ պատշաճ առիթներով՝ կարգ մը ազգայիններու: Այս աշխատանքը յանձնուեցաւ ընկի. Անի Օհանեանին, որ բժախնդրօրէն կատարեց իրեն վստահուած պարտականութիւնը: Մեր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնենք ընկի. Օհանեանին:  
Հորիզոն շաբաթաթերթին մէջ բարի ապաքինման մեր մաղթանքը եւ վշտակցութիւնը յայտնեցինք Շրջ. վարչութեան ներկայ անդամներուն, մասնաճիւղերու ներկայ վարչական անդամներուն եւ մեր յանձնախումբերու անդամներուն:  
Վերոյիշեալ թիւերը չեն ներառեր մեր ամենօրեայ ելեկտրոնային նամակագրութիւնները:

## **2. Ստացուած գրութիւններ**

- Նամակներ

Այս տարեշրջանի ընթացքին ստացած ենք 213 նամակներ եւ 20 բացիկներ:  
ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւն, շրջաններ, մասնաճիւղեր եւ անդամներ  
Հ.Հ. Դեսպանատուն եւ Սփիւռքի նախարարութիւն  
Քանատայի Ազգային Առաջնորդարան  
Պատկան մարմիններ եւ քոյր միութիւններ  
Ազգային հաստատութիւններ  
Ազգայիններ եւ անհատներ  
Օտար կազմակերպութիւններ եւ հաստատութիւններ  
Այլ միութիւններ

- Կեդրոնական վարչութեան շրջաբերականներ եւ յուշանօթեր

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութենէն ստացած ենք 38 շրջաբերականներ, 56 նամակներ, 34 Ե-նօթեր, 22 մամլոյ հաղորդագրութիւններ, 2 շրջաբերական-նամակներ, 1 կոչ եւ ել-նամակով ստացուած բազմաթիւ նօթեր: Վարչութիւնս օրին ընթացք տուած է Կեդրոնական վարչութեան կողմէ յղուած բոլոր շրջաբերականներուն եւ յուշանօթերուն երբեմն հայցելով մասնաճիւղերու օժանդակութիւնը:

# ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

## Գործունեություն

Երկամեայ այս շրջանի ընթացքին, մեր տասը մասնաճիւղերը իրենց գործունե մասնակցությունը բերին գանատահայ գաղութի ազգային-քաղաքական կեանքին:

Մասնաճիւղերու վարչությունները իրենց հերթական ժողովները գումարեցին ընդհանրապես շաբաթական դրութեամբ, իսկ անդամական ժողովները՝ ամսական դրութեամբ: Անոնք իրենց բարոյական եւ նիւթական պարտաւորությունները կատարեցին ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան եւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ծրագիրներուն:

Շրջանային վարչություն՝

- Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատուն
- Գրպանի օրացոյց
- Սրտէ Սիրտ խմբակցություն
- Հորիզոն շաբաթաթերթ եւ մանկապատանեկան
- Սուրիահայ երեխաներու կադանդչէք
- Հայ Դատ
- ՀՕՄ-ի ննջեցեալներու եւ բարերարներու հոգեհանգիստ
- Լրատու
- Սեմինար
- Կայքէջ / դիմատետր

Կեդրոնական վարչություն՝

- Ամանոր ծրագիր
- Զաւախքի օժանդակություն
- Սուրիահայութեան օժանդակություն
- Որբախնամ եւ Ուսանող ծրագիրներ
- «Սօսէ» մանկապարտէզ
- Ստեփանակերտի նորակառոյց «Սօսէ» մանկապարտէզ
- Արցախի դրամահաւաք
- Հիմնդրամ-դրամահաւաք
- Ախուրեանի Մօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն

## ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

**2015 - 2017**

	Անդամական Պատկեր					Անդամներ 31-05-2017	Ժողովներ	
	Անդամներ 1-06-2015	Նոր անդամ	Մասնաճիւղին փոխանցուած	Մասնաճիւղէն փոխանցուած	Մահացած		Անդամական	Վարչական
Արեւ Համիլթըն	30	-	-	-	-	30	20	24
Մեղրի Գեմպրիճ	36	1	10	4	1	42	13	18
Սեւան Օթթաուա	43	1	1	1	2	42	14	14
Առազաստ Միսիսոկա	25	2	1	1	-	27	15	10
Արազ Սէնթ Գաթրինգ	21	3	1	1	2	22	13	6
Ռուբինա Ուինձըր	14	-	-	-	-	14	20	10
Շուշի Լաւալ	192	2	3	3	3	191	20	75
Արազ Վանգուվըր	38	6	1	-	-	45	14	16
Ռուբինա Թորոնթօ	399	51	4	2	10	442	19	63
Սօսէ Մոնթրէալ	372	38	8	6	16	396	16	58
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>1170</b>	<b>104</b>	<b>29</b>	<b>18</b>	<b>34</b>	<b>1251</b>	<b>164</b>	<b>294</b>

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

## Մեմինար

Մենթ Գաթրինգ «Արագ» մասնաճիւղի հրաւերով, սեմինարը տեղի ունեցաւ Մայիս 14, 2016-ին, մասնակցութեամբ 130 անդամներու եւ համակիրներու: Ի բացառեալ Վանգուվըրէն, բոլոր մասնաճիւղերը ներկայութիւն արձանագրեցին:

Մեմինարի բացումը կատարեց վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեան եւ ամփոփ զեկուցեց Շրջանային վարչութեան գործունէութեան մասին: Ապա, ՀՕՄ-ի Կ. Վ. անդամ եւ Գանատայի շրջանի ներկայացուցիչ ընկի. Վարսենիկ Սարգիսեան ներկայացուց Կ. Վ. զանազան ծրագիրները, կեդրոնանալով ՀՕՄ-ի «Սօսէ» մանկապարտէզներու ծրագրին, մանաւանդ Ստեփանակերտի նորակառոյց մանկապարտէզի իրականացման անհրաժեշտութեան: Տուցադրուեցաւ Ստեփանակերտի նորակառոյց «Սօսէ» մանկապարտէզի նոր համալիրի շինութեան աշխատանքներու մասին տեսերիզ մը: Ապա, մանկապարտէզի վերաշինութեան դրամահաւաքի անդամ ընկի. Հուրի Նաճարեան ներկայացուց յանձնախումբի աշխատանքները եւ դրամահաւաքին մասնակցելու զանազան միջոցները:

Մեմինարի երկու դասախօսները յատկապէս հրաւիրուած էին Ֆլօրիտայէն: Առաջին դասախօսը՝ Պրն. Պարէտ Մարոնեան ներկայացուց իր նորագոյն աշխատանքը՝ "Women of 1915" վաւերագրական ժապաւէնէն հատուածներ: Տեղի ունեցաւ հարց-պատասխան: Երկրորդ դասախօսը՝ Տոթթ. Քրիս Սասունի շատ հետաքրքրական ձեւով ներկայացուց իր մեծ հօր եւ մեծ մօր Կարօ եւ Լօլա Սասունիներու կեանքէն դրուագներ եւ անոնց փոխանցած ազգային արժէքները: Դասախօսները եւ ընտրուած նիւթերը արժանացան ներկաներու բարձր գնահատանքին:

Առ ի գնահատանք իրենց սիրայօժար մասնակցութեան, երկու դասախօսներուն նուիրուեցինք Հրայր Բազէ Խաչերեանի «One Church One Nation» գիրքը:

Յայտագրի վերջին հանգրուանն էր Inniskillin գինետան այցելութիւնը, ծանօթանալու գինիի պատրաստութեան ձեւերուն եւ համտեսելու մի քանի տեսակ գինի:

Երեկոյեան տեղի ունեցաւ խրախճանք, Մենթ Գաթրինգ «Արագ» մասնաճիւղի 100-ամեակին առիթով:

# ԿՐԹԱԿԱՆ

## **Շրջանային Վարչութեան Կրթաթոշակ**

2015-2016 տարեշրջանին ստացանք 11 դիմումնագրեր, իսկ 2016-2017 տարեշրջանին՝ 15 դիմումնագրեր: Հիմնուելով պատգամաւորական ժողովէն վաւերացուած նախահաշիւին վրայ, իւրաքանչիւր տարեշրջանի, կրթաթոշակի յանձնախումբը նկատի ունեցաւ 10 թեկնածուներ: Վարչութեանս վաւերացումով իւրաքանչիւր ուսանողի յատկացուեցաւ \$1,000.00:

2015-2016 տարեշրջանին կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

Թաշճեան Արամ	Մոնթրէալ
Պալեան Բայիկ	Մոնթրէալ
Նայիմ Լարա	Մոնթրէալ
Պոյաճեան Արազ	Լաւալ
Նաճիար Քարինա	Լաւալ
Պաշրքճեան Թալիա	Լաւալ
Կոտիկեան Լորի	Լաւալ
Ղուկասեան Արա	Վանգուվըր
Քոշքարեան Սեւան	Վանգուվըր
Պէլեան Սեւակ	Մէնթ Գաթրինգ

Վարչութեանս որոշումով, 2015-2016 տարեշրջանի թեկնածուները իրենց կրթաթոշակը ստացան ձեռամբ վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեանի Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղի Սեպտեմբեր 2015-ի անդամական ժողովին, իսկ Պրն. Սեւակ Պէլեան՝ Մէնթ Գաթրինգի «Արազ» մասնաճիւղի 100-ամեակի տօնակատարութեան ընթացքին: Պրն. Արա Ղուկասեան իր կրթաթոշակը ստացաւ ձեռամբ Վանգուվըրի «Արազ» մասնաճիւղի ատենապետ ընկի. Մարալ Մինասեանի:

2016-2017 տարեշրջանին կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

Զաքարեան Լորի	Մոնթրէալ
Թաշճեան Ալին	Մոնթրէալ
Թաշճեան Սեւակ	Մոնթրէալ
Պապիկեան Արէն	Մոնթրէալ
Պաքարեան Շուշի	Մոնթրէալ
Պալեան Բայիկ	Մոնթրէալ
Թովուզեան Նարէ- Կասիա	Լաւալ
Կոտիկեան Լորի	Լաւալ
Հաճիպալեան Մակայի	Լաւալ
Պաշրքճեան Թալիա	Լաւալ

2016-2017 տարեշրջանի թեկնածուները իրենց կրթաթոշակը ստացան Սեպտեմբեր 2016-ի անդամական ժողովներուն, Մոնթրէալի մէջ ձեռամբ վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեանի, իսկ Լաւալի մէջ՝ ձեռամբ վարչութեանս անդամ ընկի. Անի Գրալեանի:

## **Կրթական Օճախներ**

2015-2017 տարեշրջանին վարչութիւնս կատարեց իր տարեկան նիւթական օժանդակութիւնները կրթական հաստատութիւններուն, ամէնօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններուն, ամառնային ճամբարներուն, ծաղկոցներուն եւ Մոնթրէալի մանկամտորին, նաեւ ըստ կարելիութեան ընդառաջեց տարեշրջանի ընթացքին անոնց կողմէ եղած բոլոր հրաւերներուն, ըլլան անոնք տօնակատարութիւն, ելոյթ կամ ամալերջի հանդէս:

## **Շրջանային վարչութեան մրցանակ**

2015-2017 տարեշրջանին, վարչութիւնս որոշած է շարունակել «ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան» մրցանակի տուչութիւնը: Սոյն մրցանակը կը շնորհուի Գանատայի հայկական ամէնօրեայ վարժարաններու երկրորդական բաժանմունքի աւարտական դասարանէն այն աշակերտին, որ օրինակելի կամաւոր աշխատանք ցուցաբերած է դպրոցէն ներս: Թեկնածու աշակերտը պարտի ամբողջացնել հետեւեալ պայմանները՝ առաջնորդի յատկանիշներ եւ գործօն մասնակցութիւն դպրոցական կեանքէն ներս, ինչպէս աւելի փոքր տարիքի աշակերտներու օժանդակութեան եւ ձեռնարկներու կազմակերպական աշխատանքին: Մրցանակի նիւթական արժէքն է \$250 , պայման է աշակերտին յանձնել ՀՕՄ-ի Շրջ. վարչութեան անուամբ վճարագրով:

Թորոնթոյի ՀՕՄ-ի Երկրորդական վարժարանէն մրցանակին արժանացաւ 2016-ին Հրակ Քելէպոզեան, 2017-ին՝ Փաթիլ Ավանեսի:

## **ՔԱՐՈԶՉԱԿԱՆ**

22-րդ Պատգամաւորական ժողովի աւարտին, Սեպտեմբեր 2015-ին, Հորիզոն Շաբաթաթերթին մէջ լոյս տեսաւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան 2013-2015 տարեշրջանի ամփոփ տեղեկագիրը:

## **Լրատու**

Լրատուն՝ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի լաւագոյն գրաւականը, ուր կ'արտացոլայ Շրջանային վարչութեանս եւ իր տասը մասնաճիւղերու բեղուն գործունէութիւնը, լոյս տեսաւ «Հորիզոն» շաբաթաթերթին մէջ Մայիս 2016-ին եւ Յունիս 2017-ին:

Վարչությունս բարձր կը գնահատեմ Լրատուի յանձնախումբի անդամներու ժրջան ու բծախնդիր աշխատանքը:

## **Կայքէջ**

Կայքէջը անընդհատ թարմացման դրութեան մէջ է: Յիշենք թէ՛ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի անդամակցութեան եւ կրթաթոշակի դիմումագրերը կարելի է ամբողջացնել առ ցանց եւ ուղիղ գիծով յանձնել: Այս աշխատանքը կարելի եղաւ իրականացնել շնորհիւ ընկի. Սօսէ Կարապետեանին: 2015-2017 տարեշրջանին, ընկ. Շահէ Բաբիսեան վերանշանակուեցաւ կայքէջի պատասխանատու եւ անմիջապէս կատարեց իրեն ուղարկուած բարեփոխութիւնները:

Մեծապէս կը գնահատենք եւ սրտանց շնորհակալ ենք ընկի. Սօսէ Կարապետեանին եւ ընկ. Շահէ Բաբիսեանին իրենց սիրայօժար օժանդակութեան եւ ներդրումին:

## **Դիմատետր**

2015-2016 տարեշրջանին, դիմատետրի ներկայացուցիչ վերանշանակուեցաւ ընկի. Իոնն Թիլիմեան, որ անընդհատ կապի մէջ գտնուեցաւ Շրջանային վարչութեան հետ՝ փոխանցելու իրողութիւնները, իսկ 2016-2017 տարեշրջանին՝ ընկի. Սիլվա Պետիբեան: Իւրաքանչիւր մասնաճիւղ նաեւ ունի դիմատետրի իր ներկայացուցիչը՝ նորութիւնները զետեղելու եւ լուրերը սփռելու:

## **Հարցազրոյցներ**

Վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեան հարցազրոյցներ ունեցած է «Հորիզոն» շաբաթաթերթին եւ «Հայ Հորիզոն» հեռատեսիլի կայանին հետ, ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան գործունէութեան եւ Արցախի քառօրեայ պատերազմի օժանդակութեան հանգանակութեան նիւթերով: Ինչպէս նաեւ, երկու տարբեր առիթներով, Հայաստանի Նորանոր կայքին հետ, ծանօթացնելու ՀՕՄ-ի Գանատայի շրջանն ու իր գործունէութիւնը մասնաւորաբար նոր գաղթած Սուրիահայերու առնչութեամբ, Մայրերու Օրուայ յիշատակումը եւ հայ կնոջ պատասխանատուութիւնը Գանատայի տարածքին:

## **ՏՆՏԵՍԱԿԱՆ**

### **Եկամուտի Աղբիւրներ**

- **Տարետուրք**

Բոլոր մասնաճիւղերը ժամանակին կատարած են իրենց տարետուրքերու վճարումները:

○ **Գրպանի օրացոյց**

2015-2017 տարեշրջանին, գրպանի օրացոյցի յանձնախումբի անդամներու ջանքերուն շնորհիւ, իրագործուեցաւ այս ծրագիրը: Հասոյթին մեծ բաժինը գոյացաւ ծանուցումներէ, իսկ մնացեալը՝ անդամներու եւ ազգայիններու նուիրատուութիւններէ: 2016-ին, գրպանի օրացոյցի կողքի էջը հովանաւորեց Վանգուվըրէն Lugaro հաստատութիւնը, իսկ 2017-ին՝ Թորոնթոյէն Golden Bee Homes հաստատութիւնը:

○ **Սրտէ Սիրտ**

«Սրտէ Սիրտ» խմբակցութիւնը կը բաղկանայ 120 անդամներէ եւ շրջանիս 10 մասնաճիւղերէն: Կարելի է խմբակցութեան անդամակցիլ տարեկան \$100 նուիրելով: Ծրագրէն գոյացած եկամուտը, կ'օգտագործուի վարչութեանս ուսումնական տարեկան յատկացումներուն:

○ **Այլ Աղբիւրներ**

2015-2017 տարեշրջանին զանազան առիթներով, մեր ընկերուիներու կատարած կամաւոր աշխատանքին եւ ազգայիններու ջանքերուն շնորհիւ, ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները օտար կազմակերպութիւններէ եւ ընկերութիւններէ:

CN	\$	6,552.00
UNITED WAY	\$	1,944.00
TELUS	\$	1400.00
SCOTIA BANK	\$	1,000.00
STANDARD LIFE	\$	700.00
BENEVITY	\$	518.00
FONDATION DU GRAND MONTREAL	\$	500.00
INSTITUTE OF CORPORATE DIRECTORS	\$	500.00
WESTERN UNION	\$	500.00
MY TRIBUTE GIFT	\$	230.00
OTHERS	\$	90.00
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>\$</b>	<b>13,934.00</b>

○ **Նոր հաստատուած Ֆոնտ**

Յունիս 2016-ին, ընկհ. Թէօլինտա Կարապետեանի մահուան առիթով, ստացանք \$10,212 գումար մը՝ գոյացած Սրբ. Յակոբ եկեղեցոյ, ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան եւ Կարապետեան ընտանիքի նուիրատուութիւններէն: Ողբացեալ ընկերուիի ընտանիքին փափաքով, սոյն գումարով հիմնուեցաւ «Թէօլինտա Կարապետեան» հիմնադրամը, որուն շահարկման տոկոսը պիտի յատկացուի ՀՕՄ-ի Գանատայի շրջանի ուսանողական ծրագիրներու:



○ **Կտակներու Եկամուտ**

2015-2017 տարեշրջանին, Բաստրմաճեան հիմնադրամէն ստացած ենք CAD\$4,000 նուիրատուութիւն մը: Ստացանք նաեւ հետեւեալ գումարները՝ Ճետուրեան ֆոնտին US\$2,000, Վարուժան Պասթաճեան ֆոնտին CAD\$1,000 , Տիգրանուհի Արթինեան ֆոնտին CAD\$10,000 , Արսէն Օհանեան ֆոնտին CAD\$10,000 , CANARM Children's Foundation US \$20,000 :

○ **Ֆոնտեր եւ Հիմնադրամ**

**Մնայուն ծրագիրներու ֆոնտեր**

1. ՀՕՄ-ի Արցախի «Սօսէ» Մանկապարտէզ
2. ՀՕՄ-ի Զուախքի Կրթական եւ Մշակութային Ֆոնտ
3. ՀՕՄ-ի Որբերու Խնամակալութեան Ծրագիր
4. ՀՕՄ-ի Որբերու Ուսման Ծրագիր
5. ՀՕՄ-ի Սօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն

**Անձեռնմխելի**

1. ՀՕՄ-ի Հիմնադրամ
2. Տէր եւ Տիկին Նուպար Ճետուրեան
3. Նայիրի Պօղոսեան-Նազարեան
4. Գրիգոր եւ Ռազմուհի Շահինեան
5. Ծովակ Խաչերեան
6. Պօղոս եւ Մարի Սահակեան
7. Վարուժան Պասթաճեան
8. Տիգրանուհի Արթինեան
9. Արսէն Օհանեան
10. Արմէնուհի Փիլիկեան
11. Ագրիպաս եւ Մաննիկ Տայլերեան
12. Թէօլինտա Կարապետեան

Ֆոնտերու գումարներուն կրած փոփոխութիւնները տեսնել նիւթական տեղեկագրին մէջ:

**Բացառիկ Ցատկացումներ**

Ընթացիկ տարեշրջանի յատկացումներուն կը միանան հետեւեալ բացառիկ յատկացումները:

1- ՀՕՄ-ի Հայաստանի Շրջ. վարչութիւն	\$ 500.00
2-Հաղորդի Մեծ Թաղեր «Սօսէ» մանկապարտէզի 15-ամեակ	\$ 600.00
3-Armenoid productions	\$ 7,000.00
4- ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան Շրջանային վարչութեան Shadoyan Fashion Couture House from Armenia-ի ձեռնարկ	\$ 1,000.00
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>US\$ 9,100.00</b>

1-Հայ Դատ	\$ 27,000.00
2- Քեպլեզի Սուրիահայություն Ծանոթություն Միացեալ Մարմին	\$ 1,000.00
3- Հորիզոն շաբաթաթերթի 35- ամեակ	\$ 1,000.00
4-Պատանիներու Հայաստանագնացություն	\$ 1,000.00
5-ՀԵԴ ԳԵՄ Վանաձորի ճամբար	\$ 500.00
6-Թորոնթոյի ՀՕՄ-ի վերանորոգուած մանկամտր	\$ 1,000.00
7- Սէնթ Գաթրինգ «Արագ» մասնաճիւղի 100-ամեակ	\$ 1,000.00
8- Գանատայի Կարմիր Խաչ (Fort McMurray-ի հրդեհ, Matthew փոթորիկ եւ Քեպլեզի ու Օնթարիոյի կարգ մը շրջաններու հեղեղ)	\$ 5,650.00
9- Հ. Հ. Դեսպանատուն (ԵուսուՖ Քարշի յուշարձան)	\$ 3,000.00
10- Համա- ՀՄԸՄ ական 10-րդ մարզախաղեր	\$ 1,500.00
11- Մոնթրէալի «Միհրան Փափագեան» կոմիտէի հիմնադրութեան 60-ամեակ	\$ 1,000.00
12- Սրբ. Յակոբ Ազգ. վարժարանի աշակերտական Հայաստանագնացություն	\$ 1,000.00
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>CAD\$ 44,650.00</b>

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### **Յարաբերական**

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան հետ մեր յարաբերությունները եղած են միշտ սերտ: ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան Գանատայի շրջանի ներկայացուցիչ ընկի. Վարսենիկ Սարգիսեան, հեռաձայնային հաղորդակցութեամբ մաս կազմեց վարչութեանս լիազումար նիստերէն ոմանց, խորհրդակցելու եւ ՀՕՄ-ի Կ. Վ. ծրագիրները փոխանցելու:

Ընթացք տուած ենք Կեդրոնական վարչութեան յղած շրջաբերականներուն, նամակներուն եւ յուշանօթերուն, եւ ի պահանջեալ հարկին զանոնք փոխանցած ենք մեր մասնաճիւղերուն եւ անդամներուն:

2015-2017 տարեշրջանի մեր նիւթաբարոյական գործունէութեան բոլոր տուեալները անյապաղ յղած ենք Կեդրոնական վարչութեան:

Պաշտօնական նամակագրութեան կողքին, վարչութիւնս հեռաձայնային հաղորդակցություններով եւ էլ-նամակներով կապ հաստատած է Կեդրոնական վարչութեան գրասենեակին հետ:

## **ՀՕՄ-ի 71-րդ Համահայկական Պատգամաւորական Ժողով**

ՀՕՄ-ի 71-րդ Համահայկական Պատգամաւորական ժողովին, Գանատայի շրջանը մասնակցեցաւ չորս պատգամաւորներով՝ ընկերուհիներ Աննա Պուլկարեան, Անի Օհանեան, Վարսենիկ Սարգիսեան եւ Հուրի Նաճարեան: Շրջանային վարչութեան ներկայացուցիչն էր ընկի. Արմինէ Կարապետեան: Կ. վարչութեան հիւրն էր ընկի. Մարօ Ֆրունճեան եւ ժողովին հիւր ընտրուեցաւ ընկի. Սեդա Մալխասեան: Պատգամաւոր ընկերուհիները իրենց գործօն մասնակցութիւնը բերին ժողովին, ստանձնելով հետեւեալ պաշտօնները, ընկի. Արմինէ Կարապետեան՝ հաշուեքննիչ եւ նախահաշիւի յանձնախումբ, ընկի. Հուրի Նաճարեան՝ դիւանի ատենապետ, ընկի. Վարսենիկ Սարգիսեան՝ ընտրողական յանձնախումբ, ընկի. Անի Օհանեան՝ իրաւասութիւններ ճշդող յանձնախումբ: Կեդրոնական վարչութեան յաջորդ քառամեայ շրջանին համար, Գանատայէն Կեդրոնական վարչութեան անդամ ընտրուեցաւ ընկի. Վարսենիկ Սարգիսեան եւ փոխ-անդամ ընկի. Սեդա Մալխասեան:

## **Հայաստան Համահայկական Հիմնադրամ**

2015-2017 տարեշրջանին, վարչութիւնս Կ. Վ. միջոցաւ կատարեց իր US\$2,000 յատկացումը՝ տարեկան 1,000 տոլարի դրութեամբ:

Հ. Հ. Հիմնադրամի Մոնթրէալի վարչութեան մօտ, 2015-2017 տարեշրջանին անդամ ընտրուեցաւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղէն ընկի. Մարալ Պերպերեան, իսկ Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղէն՝ ընկի. Զեփիւռ Տէր Աշոտեան, որ կամքէ անկախ պատճառներով հրաժարեցաւ եւ զինք փոխարինեց ընկի. Ֆլօրա Կիրակոսեան: Իսկ Թորոնթոյի վարչութեան մօտ ՀՕՄ-ի մնայուն արժողի ներկայացուցիչն է ընկի. Հուրի Նաճարեան:

## **ՀՕՄ-ի Որբերու Խնամակալութեան Ծրագիր**

2015-2017 տարեշրջանին, Գանատայի շրջանը հովանաւորեց 419 ծնողազուրկ երեխաներ: Այս նպատակով, Կ. Վ. փոխանցեցինք US\$83,800: Որբի խնամակալութիւնը տարեկան US\$200 է, մինչեւ անձին 18 տարեկան ամբողջացումը:

## **ՀՕՄ-ի Որբերու Ուսման Ծրագիր**

2015-2017 տարեշրջանին, Գանատայի շրջանը հովանաւորեց 103 ուսանողներ: Այս նպատակով, Կ. Վ. փոխանցեցինք US\$32,960: Ուսանողի խնամակալութիւնը տարեկան US\$320 է, առաւելագոյնը չորս տարուայ տեւողութեամբ:

## **ՀՕՄ-ի «Լաւագոյն Ուսանող» Ծրագիր**

Այս ծրագրին համար վարչութիւնս US\$4,000 (տարեկան 2,000 տոլարի դրութեամբ) փոխանցեց Կեդրոնական վարչութեան, հովանաւորելով 40 աշակերտներ,

Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ: Իւրաքանչիւր աշակերտի կը փոխանցուի US\$100:

## Ախուրեանի Սօր ու Մանկան Առողջապահութեան Կեդրոն/Ծննդատուն

2015-2017 տարեշրջանին, Թորոնթոյի «Ռուբինա», Մոնթրէալի «Սօւէ», Համիլթընի «Արեւ», Գէմպրիձի «Մեդրի», Սէնթ Գաթրինգի «Արագ» եւ Միսիսսոկայի «Առագաստ» մասնաձիւղերը իրենց նիւթական աջակցութիւնը բերին Սօր ու Մանկան Առողջապահութեան Կեդրոն-Ծննդատան: Նաեւ, ազգայիններ իրենց նուիրատուութիւնը կը կատարեն ի նպաստ այս կեդրոնին:

### Արցախ

○ **ՀՕՄ-ի Գանատայի շրջանի հովանաւորած «Սօւէ» Մանկապարտէզ**

Արցախի Հաղորթի Մեծ Թաղեր գիւղի ՀՕՄ-ի Սօւէ մանկապարտէզի ծրագրին 2015-2017 տարեշրջանին փոխանցեցինք US\$30,000 :

○ **ՀՕՄ-ի Ստեփանակերտի նորակառոյց «Սօւէ» Մանկապարտէզ**

Ընթացք տալով ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 22-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 5 բանաձեւին, վարչութեանս որոշումով՝ Գանատայի շրջանը իր տասը մասնաձիւղերով պիտի հովանաւորէ Ստեփանակերտի նորակառոյց «Սօւէ» մանկապարտէզի դասարաններէն մէկը, նուիրելով անոր շինութեան ծախսը US\$25,000.00: Այս նպատակով, իւրաքանչիւր մասնաձիւղէ խնդրուեցաւ նիւթական աջակցութիւն: Կարգ մը մասնաձիւղեր հովանաւորեցին նաեւ տերեւ, ճիւղ, արմատ կամ սալիկ հետեւեալ մանրամասնութեամբ:

	Դասարանի յատկացում	Այլ յատկացում
Մոնթրէալ «Սօւէ»	\$ 5,000.00	US\$ 8,500.00
Թորոնթօ «Ռուբինա»	\$ 5,000.00	US\$ 1,700.00
Լաւալ «Շուշի»	\$ 2,000.00	
Միսիսսոկա «Առագաստ»	\$ 2,000.00	US\$ 2,000.00
Օթթաուա «Սեւան»	\$ 1,500.00	
Վանգուվըր «Արագ»	\$ 1,500.00	
Գէմպրիձ «Մեդրի»	\$ 1,000.00	US\$ 200.00
Սէնթ Գաթրինգ «Արագ»	\$ 1,000.00	US\$ 200.00
Համիլթըն «Արեւ»	\$ 500.00	US\$ 500.00
Ուինծըր «Ռուբինա»	\$ 500.00	
Շրջանային վարչութիւն	\$ 13,263.00	
Ազգայիններ		US\$ 96,689.00
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>(US\$25,000) CAD\$33,363.00</b>	<b>US\$ 109,789.00</b>

Յարդ, Գանատայի Շրջանի հանգանակած գումարն է **US\$134,789.00:**

Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2017-ին, Սրբ. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցույ Նոր Ծաղիկ մանկապատանեկան երգչախումբի կատարողութեամբ տեղի պիտի ունենայ համերգ, որմէ գոյացած հասոյթը պիտի տրամադրուի նորակառոյց «Սօսէ» մանկապարտէզին: Համերգը պիտի վայելէ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան հովանաւորութիւնը:

Գանատայի շրջանէն, Ստեփանակերտի նորակառոյց «Սօսէ» մանկապարտէզի յանձնախումբի անդամ նշանակուած է ընկի. Հուրի Նաճարեան:

○ **Արցախի օժանդակութիւն**

Ընդառաջելով ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան Արցախի օժանդակութեան կոչին, վարչութիւնս օգտագործելով զանազան լրատուական եւ ընկերային ցանցի միջոցներ (Հորիզոն շաբաթաթերթ, ՀՕՄ-ի կայքէջ եւ դիմատետր) հրատարակեց Արցախի ի նպաստ դրամահաւաքի կոչը: Հպարտութեամբ կ'ուզենք յայտնել թէ՛ մեր մասնաճիւղերու կողքին, մեծ թիւով ազգայիններ իրենց նիւթական ներդրումը բերին այս յոյժ կարեւոր դրամահաւաքին:

Յարդ ստացած ենք հետեւեալ նուիրատուութիւնները՝

Շրջանային վարչութիւն	\$	5,000.00
Մոնթրէալ «Սօսէ»	\$	5,000.00
Թորոնթօ «Ռուբինա»	\$	5,000.00
Լաւալ «Շուշի»	\$	5,000.00
Միսիսսէգա «Առագաստ»	\$	3,500.00
Օթթաուա «Սեւան»	\$	3,000.00
Գեմպրիճ «Մեղրի»	\$	1,118.00
Սէնթ Գաթրինգ «Արագ»	\$	500.00
Համիլթըն «Արեւ»	\$	700.00
Ուինծըր «Ռուբինա»	\$	400.00
Վանգուվըր «Արագ»	\$	3,860.00
Ազգայիններ	\$	91,305.00
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>	<b>\$</b>	<b>124,383.00</b>

**Կ. Վ. փոխանցեցինք US\$90,000:**

**Ջաւախք**

2015-2017 տարեշրջանին, ՀՕՄ-ի Ջաւախքի Շրջ. վարչութեան եւ Բազմազաւակ ընտանիքներու ծրագրին համար, Կ.Վ. փոխանցեցինք US\$11,000:

**Ամանոր Ծրագիր**

ՀՕՄ-ի Համահայկական 71-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւին համաձայն, Նոր Տարուան առիթով կադանդէք կը տրամադրուի հայրենիքէն ներս թէ սփիւռքեան

գաղութներու մէջ գործող եւ կարիքաւորներու ծառայող հիմնարկներու: Այս նպատակով, վարչութիւնս իւրաքանչիւր անդամի համար US\$3 դրամահաւաքի պարտաւորութիւնը կատարեց եւ երկու տարուայ համար Կեդրոնական վարչութեան փոխանցեցինք US\$7,200: Սոյն գումարը գոյացաւ մասնաճիւղերու ներդրումով:

## **Սուրիա**

Ընդառաջելով Կեդրոնական վարչութեան Սուրիոյ հայութեան օժանդակութեան կոչին,

- Տարուկ Բնակարան ծրագրին նուիրեցինք US\$5,058
- Սուրիոյ Պատասպարանին նուիրեցինք US\$2,000

## **Պուլկարիոյ մանկապարտէզ**

Ընթացք տալով ՀՕՄ-ի Համահայկական 71-րդ Պատգամաւորական ժողովէն բխած թիւ 5 բանաձեւին, վարչութիւնս Պուլկարիոյ մեծահասակներու հայերէն դասընթացքներուն եւ ուսուցիչներ պատրաստելու ծրագրին նուիրեց US\$2,000:

## **ՀՕՄ-ի նաւապտոյտ**

ՀՕՄ-ի 5-րդ նաւապտոյտը տեղի ունեցաւ 13-27 Մարտ 2016-ին եւ շրջագայեցաւ Հարաւային Ամերիկայի զանազան երկիրներու մէջ: Գանատայի շրջանէն 10 անհատներ մասնակցեցան նաւապտոյտին:

ՀՕՄ-ի ցամաքամասային առաջին շրջապտոյտը տեղի պիտի ունենայ 22 Օգոստոս- 2 Սեպտեմբեր 2017-ին, այցելելու Արեւելեան Եւրոպայի կարգ մը քաղաքներ: Գանատայի շրջանէն 28 անհատներ արձանագրուած են մասնակցելու շրջապտոյտին: Գանատայի շրջանէն, ընկի. Արմինէ Կարապետեան նշանակուած է նաւապտոյտի-շրջապտոյտի յանձնախումբի անդամ:

## **Դրամահաւաք**

ՀՕՄ-ի Հիմնադրամի ֆոնտը ուռճացնելու նպատակով, Կ.Վ. կազմեց Դրամահաւաքի յանձնախումբ մը: 2015-2017 տարեշրջանին, Կ. Վ. նախաձեռնած Յոյսի ապարանջանի եւ իրեն յատուկ զարդերու վաճառքէն, փոխանցեցինք US\$18,000:

Գանատայի շրջանէն յանձնախումբին անդամ նշանակուած են ընկերուհիներ Նայիրի Շահինեան, Աննա Պուլկարեան եւ Գլարա Յակոբեան:

## **Միջ-Շրջանային վարչական ժողով**

Կեդրոնական վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 12 Նոյեմբեր 2016-ին, Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ միջ- վարչական ժողով՝ Գանատայի, ԱՄՆ Արեւելեան եւ Արեւմտեան, ինչպէս նաեւ Աւստրալիոյ շրջաններու Շրջանային վարչութիւններու մասնակցութեամբ: Կեդրոնական վարչութիւնը եւ չորս շրջանները տեղեկացուցին իրենց ծրագիրներուն, արձանագրած յաջողութիւններուն եւ դիմագրուած

դժուարություններուն մասին: Կեդրոնական վարչութեան անդամ եւ Սուրիոյ ներկայացուցիչ ընկի. Աննա Տէր Յակոբեան մանրամասն զեկուցեց սուրիահայութեան ներկայ իրավիճակի մասին: Ժողովի օրակարգը կեդրոնացաւ անդամարշաւի եւ նիւթական ոլորտներու մարտահրաւերներուն եւ ուղեգիծերու որոնման, ՀՕՄ-ի ծրագիրներու հանրային յարաբերութեան եւ կազմակերպական աշխատանքներուն: Վարչութիւնս հիւրասիրեց շաբաթ կէսօրուայ եւ երեկոյեան ճաշերը: Իսկ, յաջորդող օրերուն, Կեդրոնական վարչութեան անդամները իրենց լիազուարթ ժողովի ընթացքին հիւրասիրուեցան Լաւալի ու Մոնթրէալի մասնաճիւղերուն եւ Ազգային Առաջնորդարանին կողմէ:

## **ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի խորհրդաժողովներ**

Նիւ Եորքի մէջ կայացած, ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի 60-րդ խորհրդաժողովին (Մարտ 2016), Մոնթրէալէն ներկայ գտնուեցան ընկերուհիներ Անի Պապիկեան, Ալիք Պուլկարեան, Սօսէ Կարապետեան, եւ Օրդ. Նանոր Մինոյեան: Իսկ, 61-րդ խորհրդաժողովին (Մարտ 2017), Թորոնթոյէն՝ ընկի. Հուրի Շիթիլեան եւ Օրդ. Սեդա Պոյաճեան:

Գանատայի շրջանէն, ՄԱԿ-ի յանձնախումբի անդամ նշանակուած են ընկերուհիներ Անի Պապիկեան եւ Անի Հոթոյեան-Ժոլի:

## **Պատանիներու Փոխանակման Ծրագիր**

Օգոստոս 2015-ին, Մոնթրէալէն Քամի Ունանեան մասնակցեցաւ Պոսթընի Հ.Ե.Դ. «Գամբ Հայաստան» ճամբարին:

Օգոստոս 2016-ին, Մոնթրէալէն Արամ Ունանեան եւ Լաւալէն Մելանի Աշեղ մասնակցեցան Պոսթընի Հ.Ե.Դ. «Գամբ Հայաստան» ճամբարին:

## **ՀՕՄ-ի Կրթաթոշակ**

2015-2016 տարեշրջանին, Գանատայի շրջանէն հետեւեալ ուսանողները ստացան ՀՕՄ-ի Կրթաթոշակը՝ Բարիսեան Շահէ (Թորոնթօ) եւ Ղուկասեան Արա (Վանգուվըր): Իսկ 2016-2017-ին՝ Կարօ-Շանթ Թոփուզեան (Լաւալ) եւ Քրիսթին Գալուստեանց (Թորոնթօ):

Գանատայի շրջանէն, կրթաթոշակի յանձնախումբի անդամ նշանակուած են ընկի. Արփի Աճէմեան եւ ընկ. Յակոբ Պուլկարեան:

## **ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ**

### **ՀՕՄ-ի շրջաններ**

ՀՕՄ-ի այլ շրջաններու հետ կապ հաստատուած ենք նամակագրութեամբ եւ ի պահանջեալ հարկին հեռաձայնային հաղորդակցութեամբ:

ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւմտեան եւ Արեւելեան շրջաններէն ստացանք Պատգամաւորական ժողովներու հրաւերներ եւ գրաւոր փոխանցեցինք հեզասահ եւ արդիւնաբեր ժողովի մեր մաղթանքները: ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի 96-րդ Պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցաւ 15-17 Յուլիս 2016ին, ներկայ գտնուեցաւ վարչութեանս ատենապետ ընկի. Արմինէ Կարապետեան:

ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան Շրջ. վարչութենէն ստացանք Պրն. Պարէտ Մարոնեանի "Women of 1915" վաւերագրական ժապաւենի առաջին ներկայացման պաշտօնական հանդիսութեան եւ սեմինարի հրաւերներ: Երկու պարագաներուն, փոխանցեցինք յաջողութեան մեր լաւագոյն բարեմաղթութիւնները:

### **ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէ**

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի նախաձեռնութեամբ կազմակերպուած Ջաւախքի յանձնախումբին՝ գնահատելու շրջանի կարիքները եւ իրագործուած աշխատանքները, ՀՕՄ-ի Գանատայի ներկայացուցիչն է ընկի. Մարօ Ֆրունճեան:

### **Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝**

- 26 Սեպտեմբեր 2015, Գաղութային Ներուծի Ամրապնդման խորհրդաժողով Քինկսթընի մէջ:
- 27 Փետրուար 2016, խորհրդակցական հանդիպում Կ.Կ.-ի ատենապետ ընկ. Ռաֆֆի Տօնապետեանի եւ դիւանի անդամ ընկ. Խորէն Տիմիթեանի հետ:
- 18 Սեպտեմբեր 2016, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի հանգանակային ընդունելութիւն Մոնթրէալի մէջ:
- 19 Սեպտեմբեր 2016, Գանատայի Խորհրդարանէն ներս ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի կազմակերպած Հայաստանի անկախութեան 98ամեակին եւ վերանկախացման 25ամեակին առթիւ ընդունելութիւն:
- 4 Մարտ 2017, ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի կազմակերպած շրջանային մակարդակի խորհրդակցական հանդիպում, Լաւալի մէջ:
- 30 Ապրիլ եւ 1 Մայիս 2017, Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլանի պաշտօնական հանդիսութիւն եւ ընդունելութիւն, Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ:

### **Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Համագանատական Մայր Յանձնախումբ**

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի համագանատական մայր յանձնախումբի մօտ, վարչութիւնս վերահաստատեց Մոնթրէալէն ընկի. Սեդա Մալխասեանի եւ Թորոնթոյէն ընկի. Վարսենիկ Սարգիսեանի թեկնածութիւնը: Ընկերուիիները սիրով ընդունեցին շարունակել իրենց վստահուած աշխատանքը: Այս առիթով, ընկերուիիները շնորհակալագիր ստացան Հ. Հ. Սփիրոքի նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեանէն, ձեռամբ Գանատայի մօտ Հ.Հ. դեսպան Պրն. Արմէն Եգանեանի «Հայաստան- Սփիրոք գործակցութեան զարգացմանը նպաստելու, ինչպէս նաեւ



Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ կատարած բարեխիղճ եւ արդիւնաւէտ աշխատանքի համար»:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերին՝

- 10 Դեկտեմբեր 2015, Հայկական Ցեղասպանութեան Հարիւրամեակի Գանատայի Մարմնի կազմակերպութեամբ՝ «Մուսա Տաղի Քառասուն Օրերը» Ֆրանց Վերֆելի գրքին ու Մուսա Լերան հերոսամարտին մասին ցուցահանդէսի բացում եւ բանախօսութիւններ Մոնթրէալի մէջ:

## **Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան**

Զանազան առիթներով կապ պահեցինք Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի ապա՝ Գերշ. Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեանի եւ Ազգային Վարչութեան հետ:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 18 Դեկտեմբեր 2015, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի Մսուրի լուսաւորում եւ այդ առթիւ կատարուած ընդունելութիւն:
- 3 Մարտ 2016, ողջերթի երեկոյ (Մոնթրէալ) նուիրուած՝ Գերշ. Տ. Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի, որուն նուիրեցինք գոյգ մը ճարմանդ (cufflink) ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութեան անունով:
- 13-14 Մայիս 2016, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողով Լաւալի մէջ:
- 10 Յունիս 2016, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեանի ի պատիւ հրաշափառին եւ ընդունելութեան Մոնթրէալի մէջ, ապա՝ 29 Յունիս 2016, Թորոնթոյի մէջ:
- 25 Յուլիս 2016, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեանի ծանօթացման հանդիպում, միութիւններու կեդրոնական, շրջանային եւ տեղական վարչութիւններուն հետ միասնաբար, Մոնթրէալի մէջ:
- 5-7 Հոկտեմբեր 2016, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Աջահամբոյր, համերգ, պաշտօնական ճաշկերոյթ եւ նուիրահաւաք ճաշ, Մոնթրէալի մէջ:
- 28 Հոկտեմբեր 2016, «Հայ Ուսուցիչ»ին նուիրուած ընդունելութիւն Թորոնթօ:
- 24 Նոյեմբեր 2016, «Ծառայութեան Տարի» ձեռնարկ Թորոնթոյի մէջ, ապա՝ 1 Դեկտեմբեր 2016 Մոնթրէալի մէջ: Այս առիթով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Սրբ. Արք. Չարեան «Գիր Օրհնութեան» շնորհեց ՀՕՄ-ի Գանատայի մեծ ընտանիքին, իր բոլոր մասնաճիւղերուն եւ անդամներուն: Իսկ, «Ծառայութեան Տարի» Գնահատագրին արժանացան Քեպլեզէն ընկերուհիներ Անահիտ Գաբրիէլեան, Վանին Գապասագալեան, Սիլվա Գաբբուզեան, Արուս Էհրամճեան, Ֆլօրա Կիրակոսեան, Արմինէ Ասատուրեան, Անժէլ Պետրոսեան, Արմինէ Կարապետեան, Շնորհիկ Զոպոյեան, Նոյեմի Եաղճեան, Սեդա Մալխասեան, Անի Օհանեան, Մարալ Յովսէփեան եւ Զեփիւռ Ասատուրեան, Օնթարիոյէն ընկերուհիներ Վարսենիկ Սարգիսեան, Յասմիկ Ժանտու, Արփի Աճէմեան, Նաթալի Մանուկեան, Զեփիւռ

Տորնա, Գեղուհի Պասթաճեան, Բեննա Թարգի, Սեդա Սեւակեան եւ Ալիս Շիթիլեան:

- 8 Դեկտեմբեր 2016, Գանատայի Ազգային Առաջնորդարանի կադանդի ծառի լուսաւորում:
- 5 Փետրուար 2017, Առաջնորդի Ընթրիք Մոնթրէալի մէջ, ապա՝ 26 Փետրուար 2017, Թորոնթոյի մէջ:
- 4 Մարտ 2017, Գանատայի Ազգային Առաջնորդարանի խորհրդաժողով Լաւալի մէջ:

## **Քոյր Միութիւններ-Կազմակերպութիւններ**

Ներկայ գտնուեցանք քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու Ներկայացուցչական ժողովներուն ու ձեռնարկներուն, հայ վարժարաններու հանդէսներուն, իսկ բացակայութեան պարագային նամակով իրենց հաղորդեցինք մեր սրտագին բարեմաղթութիւնները:

Սուրիահայութեան Օժանդակութեան Մոնթրէալ/ Լաւալ համագաղութային յանձնախումբին մէջ, ՀՕՄ-ի ներկայացուցիչ նշանակեցինք ընկի. Ֆլօրա Կիրակոսեանը:

Ընդառաջեցինք հետեւեալ հրաւերներուն՝

- 15 Օգոստոս 2015, Համազգայինի 35-րդ շրջանային ժողովի բացման նիստ Մոնթրէալի մէջ:
- 12 Սեպտեմբեր 2015, Քէպէզի Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմնի կազմակերպած ճաշկերոյթ, Մոնթրէալ:
- 19 Սեպտեմբեր 2015, Հայաստաի Հանրապետութեան 24-րդ տարեդարձի տօնակատարութիւն, Մոնթրէալ:
- 8 Նոյեմբեր 2015, ՀՄԸՄ Գանատայի Շրջ. վարչութեան կազմակերպութեամբ Նունէ Եսայեանի Թորոնթոյի համերգ:
- 15 Նոյեմբեր 2015, Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան 125-ամեակի պաշտօնական հանդիսութիւն, Մոնթրէալ:
- 29 Նոյեմբեր 2015, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանի 45-րդ մարզական խաղերու առթիւ ընդունելութիւն, փակման հանդիսութիւն եւ տողանցք, Մոնթրէալ:
- 3-4 Դեկտեմբեր 2015, Սրբ. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Պատուակալ Հովիւ՝ Տ. Արմէն Աւ. Քհնյ. Իշխանեանի վախճանման առիթով Սրբ. Պատարագի եւ Վերջին Օծման, թաղման կարգին ու հոգեճաշին, Մոնթրէալ:
- 15 Դեկտեմբեր 2015, Հ. Յ. Դ. «Միհրան Փափազեան» կոմիտէի Ամանորի եւ Սրբ. Ծնունդի առիթով հիւրասիրութիւն-հանդիպում, Մոնթրէալ:
- 24 Փետրուար 2016, Մոնթրէալի Սրբ. Յակոբ եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպութեամբ, Գերշ. Տ. Սեդրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի ողջերթի ընթրիք:
- 9 Ապրիլ 2016, Սրբ. Յակոբ Ազգային վարժարանի տարեկան հանգանակային ճաշկերոյթ:

- 24 Ապրիլ 2016, Օթթաուայի ժողովրդային հաւաք:
- 27 Ապրիլ 2016, Մոնթրէալի Հայ Կեդրոնի ՀՄԸՄ Կամքի «Հայկ Մարգարեան» վերանորոգուած մարգարահի պաշտօնական բացում:
- 8 Մայիս 2016, «Ընդդէմ Յեղասպանութեանց» քայլարշաւ, Մոնթրէալ:
- 22 Մայիս 2016, Թորոնթոյի Հոգեւոր Հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէքեանի Ծայրագոյն Վարդապետի աստիճանի տուչութիւն եւ պաշտօնական ճաշկերոյթ:
- 28 Մայիս 2016, Հայաստանի Ա. Հանրապետութեան 98-րդ տարեդարձի տօնակատարութիւն, Մոնթրէալ:
- 20 Օգոստոս 2016, ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան 44-րդ Պատգամաւորական ժողովի բացման նիստ, Մոնթրէալ:
- 1 Սեպտեմբեր 2016, Սրբ. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ Նաւակատիքի Սրբ. Արարողութիւն:
- 24 Սեպտեմբեր 2016, Քեպէքի Հայ Համայնքի միացեալ մարմնի կազմակերպութեամբ Հայաստանի Հանրապետութեան անկախացման 25րդ տարեդարձի տօնակատարութիւն, Մոնթրէալ:
- 27 Նոյեմբեր 2016, ՀՄԸՄ Գանատայի շրջանի 46րդ մարգարիադերու ընդունելութիւն, փակման հանդիսութիւն եւ տողանցք, Գեմպրիճ:
- 25 Մարտ 2017, Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէի հիմնադրութեան 60-ամեակի տօնակատարութիւն:
- 1 Ապրիլ 2017, Սրբ. Յակոբ Ազգային վարժարանի տարեկան ճաշկերոյթ:
- 2 Ապրիլ 2017, Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի սենեկային երաժշտութեան համերգ, Մոնթրէալ:
- 21 Ապրիլ 2017, Քեպէքի հայ համայնքի միացեալ մարմնի կազմակերպութեամբ, Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման պաշտօնական հանդիսութիւն, Լաւալ:
- 24 Ապրիլ 2017, Օթթաուայի ժողովրդային հաւաք:
- 5 Մայիս 2017, ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 42-րդ Ներկայացուցչական ժողով, Մոնթրէալ:
- 27 Մայիս 2017, «Ընդդէմ Յեղասպանութեանց» քայլարշաւ, Մոնթրէալ:
- 28 Մայիս 2017, Հայաստանի Ա. անկախութեան տօնակատարութեան տողանցք, Մոնթրէալ:
- 22 Մայիս եւ 31 Մայիս 2017, Հ. Հ. դեսպան Պրն. Արմէն Եգանեանի ողջերթի երեկոներ Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ:

## **Հորիզոն Շաբաթաթերթ**

Բոլոր մասնաճիւղերը կատարեցին իրենց տարեկան յատկացումները, իսկ կարգ մը մասնաճիւղեր հովանաւորեցին նաեւ «Հորիզոն» Մանկապատանեկան բաժինը: 1 Նոյեմբեր 2015-ին, ընկի. Արմինէ Կարապետեան ներկայ գտնուեցաւ «Հորիզոն» շաբաթաթերթի 35-ամեակի նուիրահաւաքին Մոնթրէալի մէջ:

2015-2017 տարեշրջանին համար, «Հորիզոն» շաբաթաթերթին փոխանցեցինք **\$30,120:**

## **Հ. Հ. Դեսպանություն**

Այս տարեշրջանին, Հայաստանի վերանկախացման տոնին առթիւ ՀՕՄ-ի մեծ ընտանիքը դեսպանատան նուիրեց \$9,100:

Շաբաթ, 10 Դեկտեմբեր 2016-ի կեսօրին, Հ.Հ. դեսպանի Տիկ. Մարիա Եզանեան հիրընկալեց ՀՕՄ-ի ընկերուհիները դեսպանատան մէջ: Հրաւերին ներկայ գտնուեցան Շրջանային վարչութենէն ընկերուհիներ Արմինէ Կարապետեան, Վարդուկ Պեգճեան, Նաթալի Մանուկեան, Սիլվա Պետիրեան, Սիլվա Գարբուզեան եւ Անի Թաշճեան: Ինչպէս նաեւ, Կեդրոնական վարչութեան մօտ Գանատայի ներկայացուցիչ ընկի. Վարսենիկ Սարգիսեան, Կ.Վ. նախկին անդամ ընկի. Մարո Ֆրունճեան, Շրջ. վարչութեան նախկին ատենապետ ընկերուհիներ Աննա Պուկարեան եւ Սեդա Մալխասեան, Լաւալի մասնաճիւղի ատենապետ ընկի. Ազգանուշ Հատիտեան, Մոնթրէալի մասնաճիւղի փոխ-ատենապետ ընկի. Ռիթա Օհանեան եւ Օթթաուայի մասնաճիւղի վարչութիւնը լիակազմ: Ընկի. Արմինէ Կարապետեան ՀՕՄ-ի Գանատայի անունով Տիկ. Եզանեանին յանձնեց մետաքսեայ շալ եւ ծաղկեփունջ: Մեծապէս կը գնահատենք Տիկ. Եզանեանի այս նախաձեռնութիւնը եւ ջերմ ու անկեղծ ընդունելութիւնը:

Կիրակի, 12 Մարտ 2017-ին, Մոնթրէալի եւ Լաւալի մասնաճիւղերու Կանանց Միջազգային Օրուայ միացեալ ձեռնարկին, Հ. Հ. դեսպան Պրն. Արմէն Եզանեան պատուեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախկին անդամ բազմավաստակ ընկի. Վանուհի Իսաջանեանը Երախտագիտութեան Մետալով, որ շնորհուած էր Հայաստանի անկախութեան 25-ամեակին առթիւ Հ. Հ. նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ՝ Հայրենիք-Սփիւռք կապերու ամրապնդման եւ զարգացման ի շահ, ընկի. Իսաջանեանի տարած աշխատանքին համար:

Հայաստանի եւ Գանատայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակին եւ Գանատայի համադաշնակցութեան 150-ամեակին զոյգ առիթներով, Օթթաուայի մէջ աշխարհահռչակ լուսանկարիչ Եուսուֆ Քարշի յուշարձանի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 9 Յունիս, 2017-ին: Հանդիսութեան ներկայ գտնուեցաւ ընկի. Արմինէ Կարապետեան:

2015-2017 տարեշրջանին համար, Հ. Հ. դեսպանատան փոխանցեցինք **\$12,100:**

## **Հ. Հ. Սփիւռքի Նախարարություն**

Հ. Հ. Սփիւռքի Նախարարութեան նախաձեռնութեամբ Հայրենիք-Սփիւռք 6-րդ համաժողովը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 18-19-20, 2017 Երեւանի մէջ: ՀՕՄ-ի Գանատայի Շրջ. վարչութիւնը պիտի ներկայացնեն ընկերուհիներ՝ Մարո Ֆրունճեան եւ Հուրի Նաճարեան:

Հ.Հ. Սփիւռքի Նախարարութեան 2015 եւ 2016 թուականներու տարեգիրքերուն համար փոխանցեցինք մեր շրջանի գործունէութեան մասին տեղեկութիւններ:

2015-2017 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ  
ՀՕՄ-Ի ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

\$942,534.00

ՇՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\$624,405.00

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$1,566,939.00

## **ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչության 2013-2015 տարեշրջանի գործունեության արժեւորում**

Բանաձեւի յանձնախումբը, ընտրուած ՀՕՄ-ի Գանատայի 92-րդ եւ Գանատայի շրջանի 22-րդ պատգամաւորական ժողովէն, լսելէ ետք ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան բարոյական եւ նիւթական տեղեկագրերը, յարաբերական թուղթեր քննող եւ հաշուեքննիչ յանձնախումբերու զեկոյցները, ինչպէս նաեւ գործունեութեան ըստ էութեան քննարկման ընթացքին ժողովականներուն արտայայտած կարծիքները եւ գնահատանքները, կը հասատատէ թէ ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան երկամեայ գործունեութիւնը կ' արժանանայ բարձր գնահատանքի:

Ժողովականները բարձր գնահատեցին Շրջանային վարչութեան ծաւալուն եւ ընդարձակ գործունեութիւնը շեշտելով հետեւեալ կէտերը:

Ա-Կանոնաւոր եւ բժախնդիր դասաւորումը յարաբերական եւ հաշուական թուղթերու:

Բ-Բոլոր բանաձեւերու իրագործումը:

Գ-Կեդրոնական վարչութեան բոլոր ծրագիրներուն լիուլի մասնակցութիւնը պահելով իր մասնակցութեան առաջնակարգ դիրքը բոլոր մակարդակներուն վրայ նամանաւանդ նիւթական գետնի վրայ, որ Գանատայի շրջանին պատկանելու հպարտանքի զգացում կը ներշնչէ ընկերուհիներուն:

Դ-Սուրիահայութեան օժանդակութեան իրագործուած ծրագիրները:

Ե- Իր պատրաստակամութիւնը դիմելու մասնաճիւղերուն ապահովելու համար անոնց աջակցութիւնը:

Զ-Նիւթական նոր աղբիւրներ ապահովելու կապակցութեամբ տարուած աշխատանքը եւ ստացուած նոր կտակի առնչութեամբ կատարած իր աշխատանքները:

Է-Մասնաճիւղերու հետ ունեցած իր սերտ յարաբերութիւնը:

Ը- Տեղեկագիրը նախօրօք առաքելու նախաձեռնութիւնը:

Թ- Բոլոր հրաւերներուն ներկայ գտնուիլը:

Ժ-Լրատուի մէջ հետաքրքրական նիւթերու ներառումը ինչպէս նաեւ հմայիչ եւ քաջողական դասաւորումը:

ԺԱ- 25-ամեակի պատշաճ ճաշկերոյթի յաջողութիւնը եւ իր յանխնախումբի անդամներու բժախնդրութիւնը:

ԺԲ-Իւրաքանչիւր ընկերուհիի կամաւոր աշխատանքը եւ զոհաբերութեան ոգին:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարչությունս պարտք կը զգայ ի սրտէ շնորհակալութեան խօսք ուղղելու Գանատայի Հայոց Թեմի նախկին Առաջնորդ Գերշ. Տէր Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանին, ինչպէս նաեւ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Բարգէն Սրբ. Արք. Չարեանին, Ն. Ն. դեսպան Պրն. Արմէն Եգանեանին եւ տիկնոջ Մարիա Եգանեանին, մեր հոգեւոր հայրերուն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, քոյր միութիւններուն, Հորիզոն Շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին, Սրտէ Սիրտի եւ Գրպանի օրացոյցի նուիրատուներուն, հայրենիքի մեր ծնողագուրկ երեխաներու եւ ուսանողներու խնամակալներուն, ՀՕՄ-ի Դրամահաւաքի նուիրատուներուն, դասախօսներուն, Ազգային վարժարաններու տնօրէններուն եւ ուսուցիչներուն, իրաւաբան Պրն. Արմէնակ Գազանճեանին, ընկ. Շահէ Բարիսեանին, ընկ. Լիզա Գարբուզեանին, ընկ. Սիլվա Էհրամճեանին, ընկ. Սօսէ Կարապետեանին, ընկ. Սօսի Տայեան-Արապեանին, ընկ. Անի Պապիկեանին, որ Շրջ. վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը power point ներկայացումի վերածեց, Պրն. Արմէն Ալէմեանին, Պրն. Վարուժ Գալուստեանին եւ յատկապէս ՀՕՄ-ի համայն բարեկամներուն եւ բարերարներուն:

Յատուկ գնահատանքի արժանի են ուրախ թէ՛ տխուր առիթներով, անհատներու եւ ընտանիքներու կատարած նուիրատուութիւնները ՀՕՄ-ի ծրագիրներուն: Յայտուն օրինակներն են՝

Ամուսնութեան 50-ամեակի առիթով, Արթին եւ Անի Մածակեան; Ռաֆֆի եւ Մելինէ Ճէնապեան:

Ի յիշատակ, Արտա Պաքօսի; Պետրոս Սեհիրի; Կարապետ Եունանեանի:

Ի յիշատակ, ընկ. Թէօլինտա Կարապետեանի անունով հաստատուած ֆոնտ:

Իրենց ամուսնութեան առիթով, Սիմոն եւ Արագ Գորայեան, Բոս եւ Քամի Պաղտասարեան, Սեւան եւ Ալիք Աբանեան, Դրօ եւ Անի Աբանեան:

Զակի մկրտութեան առիթով, Հրայր եւ Լալէ Եափուճեան:

Զակի առաջին տարեդարձի առիթով, Հայկ եւ Վալերի Վանլեան:

Ամանորի առիթով, փոխան ընտանեկան պարագաներու նուերի, Լեւոն եւ Սօսէ Կարապետեան:

Յատուկ շնորհակալութեան խօսք ունինք ընթացիկ տարեշրջանի Շրջանային վարչութեանս գործունէութեան ծրագրային եւ կազմակերպական աշխատանքներուն սատարող յանձնախումբերու անդամներուն, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններուն եւ իր բոլոր անդամներուն, որոնք կը կազմեն մեր գործնական աշխատանքի ամենէն հիմնական միաւորները:

## ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Հայ Օգնության Միության Գանատայի Շրջանային Վարչությունը 23-րդ Պատգամաւորական Ժողովին կը ներկայացնէ նիւթաբարոյական իր երկամեայ գործունէութեան տեղեկագիրը՝ առ ի քննարկում եւ արժեւորում:

Շրջանային Վարչութեանս երկամեայ այս տեղեկագիրը կը պարզէ 2015-2017 տարեշրջանի աշխատանքի լայնածաւալ գործունէութիւնը, որ յստակ պատկերացումն է վարչութեանս եւ իր տասը մասնաճիւղերու համագործակցութեան: Այս անցնող տարեշրջանին, վարչութիւնս դէմ հանդիման գտնուեցաւ կրկին նիւթական հետեւեալ խոչընդոտին՝ գանատական տոլարի արժեզրկումը, բաղդատմամբ ամերիկեան տոլարի: Վարչութիւնս յարգելու համար Կեդրոնական վարչութեան յատկացումներու խոստումները, որ կը կատարուին ամերիկեան տոլարով, մասնաճիւղերէ գանձուած գանատական տոլարի գումարներու տարբերութիւնը ամբողջացուցած է իր հաշիւէն: Շօշափելի է Գանատայի տարածքին, յատկապէս փոքր գաղութներու արձանագրած անդամական թիւի աճը որպէս հետեւանք Սուրիոյ հայ գաղութի արտագաղթին: Առ այդ, միօրեայ թէ ամէնօրեայ հայկական վարժարաններու աշակերտութեան թիւը բազմացաւ եւ ՀՕՄ-ի շարքերը խտացան: Մասնաճիւղերը, իրաքանչիւրը իր պայմաններուն համաձայն, մշակեցին մասնայատուկ ծրագիրներ՝ օգնութեան փութալու Գանատա նոր գաղթած Սուրիահայ ընտանիքներուն:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը հպարտ է իր շուրջ համախմբուած նուիրեալներու փառանգով: Այս ուժն է, որ յոյս ու եռանդ կը ներշնչէ, իր գործունէութիւնը շարունակելու եւ ՀՕՄ-ի բոլոր ծրագիրները իրականացնելու: Սակայն, քայլ պահելու համաշխարհային արագընթաց զարգացումներուն, ինչպէս նաեւ Գանատայի մէջ հայ գաղութի դիմագրաւած աշխարհագրական եւ քաղաքական փոփոխութիւններուն հետ, վարչութիւնս կենսական կը նկատէ ունենալ համագաղութային տեսլական մը, արդիականացնել մեր գործելաոճը եւ երիտասարդացնել մեր շարքերը, բարելաւելու մեր շրջանի կարողութիւնները:

Վարձքը կատար բոլորին: